ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/135 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	LED-7100T	Genaray	Մակխցիկային LED լույսը պետք է ապահովի պայծառ, փափուկ լույս՝ ճշգրիտ կառավարմամբ և կոմպակտ դիզայնով: Այն պետք է լինի շատ թեթև և կատարյալ՝ տեսախցիկի հետ օգտագործման տեսակետից, ինչպես նաև փոփոխական հոսանքի սնուցմամբ ստուդիայում շարունակական աշխատանքի համար: Այն պետք է լինի 312 լուսադիոդներից ոչ պակաս քանակով և ելնելով նկարահանման տարբեր պայմաններից կարգավորվի առնվազն տաք 3200K-ից մինչ սառը 5600K՝ ապահովելով առնվազն 1400 լյուքս պայծառություն առնվազն 3 ֆուտ հեռավորության վրա: Պայծառությունը պետք է կարգավորվի և չթարթի 100–10% սահմաններում: Գույնը և պայծառությունը պետք է կարգավորվեն հետևի վահանակից սահուն համալարվող սկավառակների միջոցով: Լրակազմում պետք է ներառված լինի մղլակով լուսացիր, որը պետք է թույլ տա մեղմացնել լույսի հոսքը և նվազեցնել ցայտունությունը նկարահանվող օբյեկտի տարբեր հատվածամասերի միջև: Այս մակխցիկային լույսի սնուցումը կարող է իրականացվել լրակազմում ներառված NP-F550 մարտկոցներով,

			փոփոխական հոսանքի սռաջարկվող ադապտերով կամ էլ Sony L շարքի ցանկացած այլ մարտկոցով: Հնարավոր է օգտագործել մեկ կամ երկու մարտկոց միաժամանակ: Հետևի վահանակի առնվազն չորս LED-ից կազմված ցուցասարքը պետք է արտացոլի մնացյալ լիցքը մարտկոցների, որն էլ օգնում է գաղափար կազմել մարտկոցների պահանջվող քանակի մասին: Լրակազմում պետք է մտնեն նաև երկու կուտակիչների համար նախատեսված լիցքավորման սարք, ավտոմեքենայի լիցքավորման սարք, գնդիկավոր գլխիկով թեքվող և դարձկեն ամրակապ,տեղափոխելու համար նախատեսված պատյան: Որպեսզի կարողանանք լուսատուն տեղակայել և կարգավորել կանգնակի վրա առնվազն 1/4"-20 դույմանոց պարուրակի միջոցով նրա գնդաձև գլխիկի ամրակը կարելի է հանել, իսկ տեղափոխման պատյանում լուսատուն հավաքվում է մնացյալ պարագաներով հանդերձ: Գործառույթներ Կարգավորվող գունային ջերմաստիճանը առնվազն 3200K-ից մինչև 5600K: Առնվազն 312 LED ապահովում է մինչև 1400 լյուքսից ոչ պակաս պայծառություն առնվազն 3 ֆուտ հեռավորության վրա: Պայծառություն առանց թարթման՝ մթնեցում 100-ից 10% : Ոչ աստիճանական, սահուն գույնի/պայծառության կարգավորիչներ հետևի վահանակի վրա: Ներառում է մագնիսական մղլակային դիֆուզոր: Կրկնակի կուտակչային ամրակապ Հրատապ փոխարինման հնարավորությամբ Լրակազմը պետք է ներառի առնվազն երկու NP-F550 մարտկոց, AC ադապտեր, լիցքավորման սարք և մեքենայի լիցքավորման սարք: Մատակարարվում է առնվազն 360°/180° պտտվող գնդիկավոր գլխիկով և պայուսակով: Տեխնիկական բնութագրեր Գույնի ջերմաստիճանը՝ ոչ պակաս, քան 3200-ից 5600K Լուսադիոդների քանակը՝ 312-ից ոչ պակաս Սնուցում Մուտքային հաստատուն հոսանքի հզորություն՝ առնվազն 7,4-ից 14,8 VDC Ֆիզիկական չափսերը՝ առնվազն 19 x 11.4 x 4.4 սմ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/135 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
5			